

քին մէջ պատահած մեծ ու փոքր հրդեհներ և այլն։
Նկատելի է որ Ձեռագիրս որքան որ գրի առնուած է իբրև օրագրութիւն, բայց շատ տեղեր այդ ձեռն գուրս կ'ելլէ ու պատմագրութեան ձև կ'առնէ, այդ պատճառաւ Ձէլէպի անուանած է զայն Ժամանակագիր եւ Պատմութիւն։

Ժամանակին կարծիք յայտնած էինք թէ «Ձէլէպի իր այս հատորը գրած է օրը օրին, իբրև յուշատետր, միշտ ձեռքին տակ ունենալով զայն։ Ասոր ապացոյց են գրչութեան տարբեր ձևերը՝ երբեմն մաքուր նոտքերով, տեղ տեղ՝ շատ արագ գրուելուն պատճառաւ՝ անընթեռնի ըլլալու աստիճան իրար խառնուած, ինչպէս նաև թուղթերու տարբեր տեսակները և թանաքի ոչ միօրինակ գոյները» (Շողակաթ, էջ 52)։ Տարակոյս չկայ թէ Ձէլէպի նպատակ ունեցած է իր ժամանակի պատմութիւնը աւանդել աւելի ընդարձակ ծրագրի մը վրայ ու աւելի կանոնաւոր դասաւորութեամբ, զոր իրագործած է ետքէն յօրինելով իր Տարեգրութիւնը։ Վերջինիս հիմն ու աղբիւրը ապահովաբար եղած է մեր այս Օրագրութիւնը, այդ պատճառաւ կը տեսնենք որ շատ մը եղելութեանց նկարագրութիւնը սկսած է ու չէ աւարտած, իր գրելիք Տարեգրութեան մէջ թերիները ամբողջացնելու գիտումով անշուշտ։ Կան տեղեր ալ ուր միայն պարզ յուշագրութիւն մը ձգած է, զօրօրինակ՝ «ԶՄալիճանն գրեա՛ւ աստ» (էջ 284). «Աստ գրեա՛ւ Զչի պահոցն գալուստ Մարտիրոս վարդապետին և Դչի Աստուածածնին գնալն ի դէմ վէզիւրին առ ի Պէլլըզատ դանկատ Յունաց՝ վասն Երուսաղէմի» (էջ 292). «Աստ գրէ՛ զեւումն հաբեղին յերրորդ աւուր գալոյ Իսմայիլին» (էջ 295). «Աստ գրեա՛ւ զգնալն Աստուածատուր վարդապետին ի գիւղս եւ յիզմիր» (էջ 339). «Աստ պատմէ՛ զխաղ և զճիրիտ արքային որ անդ» (էջ 350-351) և այլն։